ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԱՖՐԻԿԱՅԻ ՌԱԺԱՆՈՒՄԸ

Եւրոպայի բարձր քաղաքականութիւնը, որպէս տարիներ առաջ, նոյնպէս և այժմ զբաղուած է այն դրութիւնով, որ ստեղծուած է եռապետեան դաշնակցութիւնով Գերմանիայի, Աւստրիա-Ունգարիայի և Իտալիայի մէջ։ Յայտնի է, որ այդ հզօր դաշնակցութեան պատճառով՝ Ֆրանսիայի և Ռուսիայի մէջ տարիներ առաջ սկսեցին բարեկամական յարաբերութիւններ, որպէս զի այդ երկու պետութիւնների բարեկամութիւնով կարելի լինի մի հակակշիռ ստեղծել Եւրոպայի կենտրոնական երեք պետութիւնների արտաքին քաղաքական միութեան։

Թէ ֆրանսիական և թէ ռուսական մամուլը, — այդ դէպքում բոլորովին համաձայն իրանց կառավարութիւնների որամադրութեան, — տարիներ շարունակ աշխատում են ֆրանսիական և ռուսական բարեկամութիւնը ամրացնել ամեն կերպ։ Ֆրանսիան իւր կողմից այս վերջին տարիներում մի ամբողջ գրականութիւն ստեղծեց Ռուսիայի վերաբերեալ, աշխատելով ֆրանսիացիների մէջ ժողովրդականացնել ռուսաց գրականութիւնը յանձին սորա լաւագոյն ներկայացուցիչների, որպիսիք են Դոստոեւսկի, Տուրգենյեւ, Տոլստոյ, թարգմանելով սոցա լաւագոյն գրուածքները. նա տուեց մի մեծ շարք քննական յօդուածների և պատմական շարադրութիւնների թէ ռուսաց գրականութեան և թէ ազգութեան ու պատմութեան վերաբերեալ։ Մի խօսքով ռուսաց անունը Ֆրանսիայում, այս վերջին տարիներում, չափազանց ժողովրդականութիւն է սկսել վայելել, որ և արտայայտում է հասարակական և քաղաքական կեանքի ամեն մի

երևոյթի մէջ։ Ֆրանսիան, այդ հանգամանքի շնորհիւ, Բալկանեան թերակղզու խնդիրներում, կանգնած է Ռուսիայի կողմը, որպէս Ռուսիան Ֆրանսիայի կողմն է այլ և այլ միջազգային խնդիրներում, ուր սա առանձին շահեր ունի, օրինակ հենց Եգիպտոսի խնդրում, որի մէջ Ֆրանսիան բացայայտ հակառակութեան մէջ է Անգլիայի հետ։

Այս այսպէս։ Բայց Ռուսիայի և Ֆրանսիայի մէջ չը կայ մի կապուած գրաւոր դաշնադրութիւն, ինչպիսին կայ Գերմանիայի, Աւստրիա-Ունգարիայի և Իտալիայի մէջ։ Եւ թէև մի դիպլոմատ-պուբլիցիստ, պ. Տատիշչեւ, նորերում յայտնեց «Ռուսկի Վեստնիկ» ամսագրում, թէ Ֆրանս-ռուսական բարեկամութիւնը խօսքից գործի է փոխադրուել և երկու հզօր պետութիւնների մէջ գրաւոր դաշնակցութիւն է կապուել, բայց այդ բանին հաւատ ընծայել դժուար է։

Բայց կապուած է թէ ոչ, հանգամանքը ինքն ըստ ինքեան ծանրակշիռ է, որ Ռուսիայի և Ֆրանսիայի մէջ եղած քաղաքական բարեկամութիւնը արդէն այնքան խոր արմատներ է գցած երկու ազգերի ոչ միայն կառավարչական, այլ և մամուլի և հասարակութեան հեռու խաւերի մէջ, որ այդ իրողութիւնը արդէն իբրև ներկայ և մօտ ապագայի քաղաքականութեան կարևոր գործիչներից մէկը պէտք է համարել, իւր նշանակութիւնով եթէ ոչ բոլորովին հաւասար, գոնէ մեծապէս չեզոքացնող եռապետեան դաշնակցութեան ոյժը։

Այսպիսով Եւրոպայի քաղաքական աշխարհը երկու բոլորովին որոշ կոմբինացիաների ազդեցութեան ներքոյ է, մի կողմից՝ Գերմանիան, Աւստրիա-Ունգարիան և Իտալիան, միւս կողմից՝ Ռուսիան և Ֆրանսիան։

Բայց դորանով դեռ ամեն բան ասուած չէ։ Գոյութիւն ունի նաև մի երրորդ համակարգութիւն, անկախ այդ առաջիններից։ Բանը ահա ինչումն է. Իտալիան, որը մտնում է եռապետեան դաշնակցութեան մէջ, ամեն տեսակ պաշտպանութիւն գտնել չի կարող Գերմանիայից և մանաւանդ Աւստրիա-Ունգարիայից։ Եւ մինչև անգամ կարելի է ասել, որ Իտալիայի բարեկամութիւնը աւելի Գերմանիայի հետ է, քան Աւստրիայի, որի հետ նա այժմ թէև ոչ միայն հաշտ է այլ և բարեկամ, բայց որի հետ սրտակցութիւն չի կարող ունենալ, քանի որ Իտալիայում գոյութիւն ունի այն հայրե-

նաէրների միութիւնը, որը «Իտալիա Իրրիդենտա» անունով պահանջում է Աւստրիայից սորա դեռ ևս իտալական երկիրները (Հարաւային Տիրոլ, Տրիենտ և Տրիեստ քաղաքները)։ Եւ չի կարող լինել Իտալիայում մի մինիստր, որը իւր սրտի խորքում նոյն զգացմունքը չունենայ։ Բայց հարկը պահանջում է, որ իտալական կառավարութիւնը այդ զգացմունքը քաղաքական ձգտումների հիմք չը շինէ, թէ չէ նա կը զրկուի Գերմանիայի բարեկամութիւնից։

Այդ այսպէս լինելով, Իտալիայի համար ժամանակի մեծ խնդիրն է ոչ թէ ձեռք բերելը այն երկիրների, որոնց հետ նա ցեղական և պատմական կապերով կապուած է, երկիրների, որոնց համար խնդիր յարուցանելը կարելի է նաև ապագայում։ Իտալիայի համար ամենակարևոր խնդիրը կազմում է Միջերկրական ծովի վերայ իշխող դիրք բռնելը, քանի որ դորանից կախուած է Իտալիայի որպէս առաջնակարգ պետութեան թէ քաղաքական և թէ առևտրական ապագան։ Արդ, հենց այդ բանի մէջն է, որ Իտալիան իւր մեծ հակառակորդն է տեսնում Ֆրանսիայի մէջ, որը, 1881 թուականին, վերցնելով Տունիսը, որի վերայ Իտալիան աչք ունէր, վերջինիս կոլոնիական քաղաքականութեան թշնամու հարուածը տուեց։ Այդ ժամանակուանից սկսում է յայտնի թշնամական դիրք բռնելը Իտալիայի կողմից Ֆրանսիայի դէմ, Ֆրանսիայի, որ կարողացաւ պահպանել ամենամեծ ստուգասրութիւն Գերմանիայի բարեկամութեան վերայ յոյսեր դրած Իտալիայի դէմ։

Բայց եթէ Գերմանիայի (և Աւստրիա-Ունգարիայի) հետ դաշնակից լինելով կարելի էր առանց անմիջական վտանգի Ֆրանսիայի դէմ անբարեկամական դիրք բռնել և նորան խօսքով վիրաւորել, բայց Իտալիան չէր կարող այդ դաշնակցութեան վերայ հիմնուելով Ֆրանսիայի դէմ դրական քաղաքականութիւն առաջ տանել մանաւանդ Միջերկրական ծովում և աւելի հեռու երկիրներում, որովհետև Գերմանիան հեռաւոր երկիրների համար, կոլոնիական քաղաքականութեան մէջ ինքը կարօտ է մի ծովային հզոր պետութեան եթէ ոչ պաշտպանութեան, գէթ նորա բարեկամութեան։

Ահա ինչու Ֆրանսիայից հեռացած Իտալիան մեծ գին պէտք է դնէր Անգլիայի բարեկամութեանը, որի շահերը շատ և շատ կէտերում շփուում են ֆրանսիական շահերի հետ՝ թէ Տունիսիայում,

ուր Անգլիան առանձնաշնորհումներ ունի, որոնք հաճելի չեն Ֆրանսիային, թէ Եգիպտոսում, ուստից Անգլիան իւր զօրքերը չի հեռացնում հակառակ Ֆրանսիայի պահանջումներին, թէ Մադագասկար կղզում, ուր Ֆրանսիական գերիշխանութեան դէմ Անգլիան անդադար ինտրիգներ է լարում և թէ ուրիշ տեղերում։ Այդ պարագաների մէջ ունենալ իբր բարեկամ Իտալիայի պէս մի պետութիւն, որը զօրեղ նաւատորմիղ ունի և կոլոնիական քաղաքականութեան մէջ ներգործող դեր է սկսում խաղալ՝ Անգլիայի համար շատ հաճելի պէտք է լինէր. և Իտալիան մոտեցաւ Անգլիային, որի հետ միասին աւելի մեծ յաջողութեամբ կարող է իւր հակա-Ֆրանսիական քաղաքականութիւնը առաջ տանել, քան եթէ միայն Գերմանիայի հետ իւր բարեկամութիւնը պահպանէր։

Դորանից ծագեց և հաստատուեց իտալական-անգլիական բարեկամութիւնը, որ հիմնուած է ոչ գրաւոր դաշնակցութեան, այլ շահերի միութեան վերայ։ Այդ բարեկամութեան առաջին և առ այժմ միակ պտուղն է այն վստահութիւնը, որ ունեցաւ Իտալիան Կարմիր ծովի աֆրիկական ափում օրինապէս ոչ ոքին չը պատկանող Մասսաուա քաղաքը զէնքի ոյժով ձեռք բերելու և այդ տեղից իւր ազդեցութիւնը Աբիսինիայի կողմերը տարածելու համար։

Գրեթէ նոյնաժամանակ բայց դեռ դորանից էլ առաջ Գերմանիան, Բիսմարկի օրերով, սկսեց իւր կոլոնիական քաղաքականութիւնը, հիմնուած իւր նորաստեղծ և արդէն բաւականի զօրեղ նաւատորմիղի վերայ։ Իւր այդ քաղաքականութեան մէջ Գերմանիայի համար անհրաժեշտ էր Անգլիայի նման տիրապետող ծովային պետութեան ոչ-հակառակութիւնը. որովհետև չը բունուած երկիրներ մինչ այս վերջին տարիներս միմիայն Աֆրիկայում կային, ուստի բնական է որ գերմանական կոլոնիական քաղաքականութիւնը լարուեց դէպի Աֆրիկա, գլխաւորապէս այդ մեծ ցամաքի արևելեան կողմերը, ուր մեծատարած երկիրներ կան, մահմեդական և այլ, որոնք նշանակուած են երևում Եւրոպացոց ձեռքն ընկնելու։

Մենք կը վերադառնանք այդ աֆրիկական խնդրին, բայց աչքից բաց չը թողնենք Եւրոպայի պետութիւնների քաղաքական կոնստելլացիան, որը, ինչպէս բզխում է մեր ասածներից, հետևեալն է՝

Մի խումբ՝ Գերմանիան, Աւստրիա-Ունգարիան և Իտալիան,

որոնց գրաւոր դաշնակցութիւնը լարուած է մէկ կողմից Ֆրանսիայի, միւս կողմից Ռուսիայի դէմ։

Երկրորդ խումբ՝ Ռուսիան և Ֆրանսիան, որոնց ոչ-գրաւոր դաշնակցութիւնը նշանակուած է դիմադրելու այդ առաջին խմբի, այսինքն եռապետութեան ձնշման։

Երրորդ խումբ՝ Անգլիա, Իտալիա և Գերմանիա, որոնց բարեկամութիւնը պայմանաւորուած է գլխաւորապէս նոցա կոլոնիական շահերի հակառակութիւնով Ֆրանսիականի հետ։

Այսպիսով մենք տեսնում ենք, որ Գերմանիան և Իտալիան մնում են երկու առանձին դաշնակցութիւնների մէջ, որոնցից մէկում (ցամաքային համար) գերիշխողն է Գերմանիան, միւսում (ծովային համար)՝ Անգլիան։ Աւստրիա-Ունգարիան միայն մէկ դաշնակցութեան անդամ է, որով նա պաշտպանւում է Ռուսիայից։ Ֆրանսիան մէկի (Ռուսիայի) բարեկամութիւնն է վայելում, բայց ենթակայ է երկու բացայայտ կամ ոչ բացայայտ դաշնակցութիւնների՝ թէ ցամաքի համար և թէ ծովի համար։ Ռուսիան վայելում է Ֆրանսիայի բարեկամութիւնը, ենթակայ լինելով մի թշնամական դաշնակցութեան հակառակութեան, ցամաքի կողմից։ Անգլիան աւելի մեծ կամ նուազ կերպով բարեկամութիւն է ցոյց տալիս և ինքն էլ վայելում մի ոչ-գրաւոր կիսա-դաշնակցութեան կողմից (Իտալիայի և Գերմանիայի հետ), ենթակայ չը լինելով ոչ մի բացայայտ դաշնակցութեան թշնամութեան, բայց և այնպէս կրելով կողմնակի կերպով Ֆրանս-ռուսական բարեկամութեան հետևանքները, որքանով որ սոքա կարող են անգլիական գործերի վերայ արտափայլել։

Այն խնամքը, որ տանում է Գերմանիան Անգլիայի հետ աւելի սերտ կերպով կապելու համար, բացատրւում է այն նշանակութիւնով, որ ունի Անգլիան եւրոպական և մանաւանդ Արևելեան խնդիրների մէջ և երկրորդ այն գերիշխանութիւնով, որ ունի Անգլիան հեռաւոր ծովերի վերայ, ուրեմն կոլոնիական քաղաքականութեան մէջ։ Եւ միայն շատ բնական է, որ Անգլիան ամենից քիչ շահ ունի ինքը գրաւոր ամուր պայմաններով կապուելու որ և իցէ ուրիշ տերութեան հետ, կուչի վերջինս Իտալիա թէ Գերմանիա։ Այդ իսկ պատճառով Անգլիայի բարեկամութիւնը Իտալիայի և Գերմանիայի հետ ամենից նուազ ամուրն է և կարող է տևողական լի-

նել միայն քանի որ Անգլիայում այժմեայ Սալիսբրեան մինիստրութիւնը կայուն է։ Սորա փոխուելով կարող են նաև այդ բարեկամութեան հիմունքները փոխուել։ Դորա հակառակ՝ եռապետեան դաշնակցութիւնը աւելի տևողական նշանակութիւն ունի, հետևապէս նաև ֆրանս-ռուսականը։

Մենք տեսանք, որ քաղաքական դաշնակցութիւնների և բարեկամութիւնների հետևանքները արտայայտուել են եւրոպական պետութիւնների այժմեայ գաղթական քաղաքականութեան վերայ։ Մինչև այս վերջին տասնեակ տարին եւրոպական մեծ պետութիւններից մի քանիսը չունէին հեռաւոր կալոնիաներ։ Ռուսիան ձեռք է բերում հեռաւոր երկիրներ միայն Ասիայում, բայց միայն ընդարձակելով իւր պետութեան սահմանները։ Միւս պետութիւնները այդ յարմարութիւնը չունեն և նոքա ստիպուած են հեռու ծովերում, նաւատորմիղներով երկիրներ ձեռք բերել։ Մեծ պետութիւններից Անգլիան և Ֆրանսիան միայն ունէին ընդարձակ կալոնիաներ աշխարհիս բոլոր մասերում. բայց այդ կողմից Անգլիայի հաւասարը չը կայ։ Աւստրիա-Ունգարիան այժմ էլ չունի ոչ մի կտոր հող իւր սահմաններից դուրս։ Գերմանիան և Իտալիան միայն այս վերջին տասնեակ տարիներում ձեռք բերին կալոնիաներ և այն, ինչպէս տեսանք՝ Աֆրիկայում։ Իտալիայի կալոնիական սկզբնաւորութիւնը դրուած է Կարմիր ծովի աֆրիկեան ափում՝ Մասսաուա՝ում, որտեղից նա կամաց կամաց ընդարձակւում է դէպի Աբեսինիայի կողմերը և այդ երկիրը աշխատում է գցել իւր բարձր իշխանութեան ներքոյ, որ և մասամբ արդէն յաջողացրել է։ Գերմանիան իւր գլխաւոր ուշքը դարձել է Աֆրիկայի արևելեան ափի և այդ ափի յետևը գտնուած երկիրների վերայ, որտեղ «Գերմանական Արևելեան-Աֆրիկական ընկերութեան» միջոցով ձեռք էր բերել ընդարձակ հողեր և կամ, նպաստաւոր պայմաններով տեղական իշխանների հետ, իւր դերիշխանութեան ներքոյ էր բերել թէ ծովափեայ գիծը՝ Զանզիբար կղզու դիմաց և թէ նորա յետևի երկիրներից մի քանիսը։ Նոյն այդ տեղերում և Աֆրիկայի խորքերում տոկունութեամբ գործում էր նաև Անգլիան, որի համար վաղուց ճանապարհ էին հար-

թել անգլիացի երևելի ճանապարհորդներ, որպէս Սպիկ, Լիւինգսոն, Ստենլէյ և ուրիշներ։ Այդ երկիրների առևտուրի գլխաւոր առարկան մինչ այժմ կաղմում էր փղոսկրը, որը գլխաւորապէս այդ տեղի արաբների ձեռքումն էր և որոնք իրանց առևտուրի ոյժը և հիմքը դրել էին ստրկութեան վերայ։ Եւ որպէս Արևելեան Աֆրիկայի առևտրի նոյնպէս և ստրկութեան համար գլխաւոր շուկան (բազարը Ծառայում էր Զանզիբար կղզու սուլթանութիւնը։ Եւրոպացիք, հաստատ ոտք կոխելով այդ երկիրների վերայ, հանդիպեցին ստրկութեան, որը անհաշտելի է եւրոպական քաղաքակրթութեան հիմունքների հետ։ Ցարուցեց Արևելեան Աֆրիկայում ստրկութիւնը և դորա հետ կապուած գերեվաճառութիւնը վերացնելու խնդիրը, գլխաւորապէս նախաձեռնութեամբ կարդինալ Լաւիժերի՝ի, որի ջանքերով կայացաւ անցեալ տարի Բելգիայի Բրիւսել քաղաքում մի կոնգրէս աֆրիկական հակա-գերեվաճառական կոնգրես՝ բոլոր այն պետութիւնների ներկայացուցիչներից, որոնք Աֆրիկայում կոլոնիաներ ունեն՝ Անգլիա, Ֆրանսիա, Պորտուգալիա, Բելգիա, Հոլլանդիա և այլն։ Այդ կոնգրէսը իւր պարապմունքները վերջացրեց անցեալ յունիս ամսին և որոշեցին այն միջոցները, որոնցով պէտք է կռուել գերեվաճառութեան դէմ։ Զանզիբարի սուլթանը դեռ ևս անցեալ տարի վերացրեց իւր սուլթանութեան մէջ գերեվաճառութիւնը։ Կոնգրեսի վերջնական ակտը ստորագրել են արդէն բոլոր ներկայացուցիչները, բացի Հոլանդիայից, որը անշուշտ շուտով իւր համաձայնութիւնը կը տայ։

Վերջին տարիներում Աֆրիկան, և այստեղ խօսքը Աֆրիկայի խորքերի մասին է, դառել է այն ասպարէզը, ուր եւրոպական պետութիւնների կոլոնիական քաղաքականութիւնը այն դերն է կատարում, ինչ կատարեց նա դարեր առաջ Ամերիկայում։ Աֆրիկան այժմ բաժանւում է եւրոպական մի քանի մեծ և փոքր պետութիւնների մէջ։ Մինչ այս վերջին ժամանակները Աֆրիկայի ահագին ցամաքի միայն ափերն էին ճանաչուած և մասամբ բռնուած եւրոպացիներից՝ Հիւսիսը՝ (Միջերկրական ծովի հարաւային ափը), Արևմուտքը և Հարաւը։ Բայց խորքերը չէին ճանաչուած։ Ներկայ ժամանակների ամենանշանաւոր ճանապարհորդ Ստենլէյի խուզարկութիւններով Եւրոպան ճանաչեց կոնգո մեծ աֆրիկական գետի և

նորա ողողած ընդարձակ երկիրների հետ. և ահա՛, այնտեղ է որ եւրոպական մրցումը սկսեց։ Որպէս զի պետութիւններից մէկը կամ միւսը չը տիրապետէ այդ երկիրներին և խաղաղ մրցմանը արգելք չը լինի, Բիսմարկի նախաձեռնութեամբ կայացաւ մի տասնեակ տարի առաջ Բերլինի կոնգրէսը՝ Կոնգո-կոնգրէս անունով, ուր վճռուեց Կոնգոյի երկիրներից կազմել մի առանձին պետութիւն և նորա թագաւոր ճանաչել Բելգիայի ներկայ թագաւորին, սահմանելով առաջուց բոլոր պայմանները այդ երկրի կառավարութեան և միւս պետութիւնների հետ ունենալիք քաղաքական և առևտրական յարաբերութիւնների։ Այդպիսով Աֆրիկայի մի ընդարձակ մասը դրուեց ապահով դրութեան մէջ։ Իսկ Կոնգոյի պետութիւնը Աֆրիկայի հարաւային—արևմտեան տրոպիկական երկիրներիցն է։ Նորա արևելեան սահմանները խորը մտնում են Աֆրիկայի մէջ։

Այժմ խնդիրը Արևելեան Աֆրիկան է՝ Կոնգոյի հակառակ կողմը։ Եւ ահա այդտեղ է, որ սկսեց գործել գերմանական Արևելեան-Աֆրիկական ընկերութիւնը, մրցելով անգլիական ընկերութիւնների հետ։ Մեծ են այդ գործում գերմանական կառավարութեան կոմիսար մայոր-ֆոն Վիսման՝ի և դր. Պետերս՝ի ծառայութիւնները, որոնց արշաւանքների և ցեղապետների հետ կապած դաշնադրութիւնների շնորհիւ գերմանացիք այժմեայ բարձր դիրքը ձեռք բերին Արևելեան-Աֆրիկայում։

Տարիների ընթացքում գերմանացոց և անգլիացոց ձեռք բերած երկիրները Արևելեան-Աֆրիկայում կազմեցին մի խառնուրդ, և մէկի սահմանները այնքան յաճախ դիպչում էին միւսի սահմաններին, որ մրցութիւնը իրար հետ տեղիք էր տալիս անընդհատ անբաւականութիւնների այդ երկու ազգերի ներկայացուցիչների մէջ։ Եւ որովհետև Գերմանիան, որպէս ասացինք սկզբում, աշխատում է խոյս տալ որ և է թշնամական ընդհարումից Անգլիայի հետ, և Անգլիայի այժմեայ մինիստրութիւնը (Սալսբրի)՝ Գերմանիայի հետ, ուստի այդ երկու կառավարութիւնները վճռեցին արևելեան Աֆրիկայում ստեղծել այդ երկու ազգերի գործունէութեան և տիրապետութեան համար նոր սահմաններ, մէկը միւսին զիջանելով այն, ինչ մէկի կամ միւսի համար առանձին արժէք ունի։

Այստեղ կարևորը այն է, որ Եւրոպայում իրար հետ հաշտ մնա-

լու համար, ուրեմն քաղաքական ընդհանուր բարեկամութիւնը ամրացնելու համար, երկու պետութիւններ համաձայնւում են երկիրների տիրապետութեան մէջ իրար զիջողութիւն անել, մէկի հողը միւսին տալ, նոր սահմաններ որոշել։ Դա մի նոր տպաւորիչ է, թէ որքան մեծ է Գերմանիայի կողմից ցանկութիւնը Անգլիայի հետ բարեկամութիւն պահպանել, այդ բարեկամութիւնից եւրոպական քաղաքականութեան խնդիրներում աւելի ապահով կերպով օգտուելու համար, որովհետև, ինչպէս կը տեսնենք ներքև, Գերմանիան, հողերի տարածութեան կողմից, այդ համաձայնութեան մէջ բաւական մեծ կորուստ է կրել։

Երկրորդ կարևոր կէտը այդ համաձայնութեան մէջ այն է, որ Անգլիան, իբր վարձատրութիւն գերմանական զիջումների Աֆրիկայում, զիջել է Գերմանիային մի փոքրիկ կտոր հող Եւրոպայում, այն է՝ Գերմանիայի հիւսիսային սահմանին շատ մօտ գտնուած Հելգոլանդ կղզին Գերմանական Ծովում, որի բնակիչները գերմանական ծագում և լեզուն ունեն այնպէս որ կղզին՝ Անգլիացոց ձեռքում՝ Գերմանիայի համար աչքի փուշ էր։

Երրորդ, Անգլո-Գերմանական համաձայնութիւնը կարևոր է նաև որպէս սկզբունք։ Թէև պատմութեան մէջ դա մի նորութիւն չէ, բայց անբաւականութիւնների առաջն առնելու այդ ձևը ստանում է այժմ նոր գործադրութիւն և նոր ոյժ [1])։ Նոյնանման տարածայ-

---

[1]) Գերմանիան, որ հաղիւ տասը տարի սկսել է գաղթական քաղաքականութիւնը, այժմ արդէն բաւականին երկիրներ և իրաւունքներ է ձեռք բերել։ Այդ երկիրներն են՝ Կամերուն, Տօգօ և Հարաւ-Արևմտեան Աֆրիկան, որոնք կառավարւում են գերմանական կայսերութիւնից ուղղակի, այսինքն սորա հաշուով և սորա նշանակած պաշտօնեաներով, բացի Նոր-Գվինէա, որը նմանապէս կառավարւում է կայսերական պաշտօնեաներով և ծախքերով, բայց այդ ծախքերը պէտք է վերադարձնեն կայսերական պաշտպանութեան ներքոյ գտնուած Նոր-Գվինէիան առևտրական ընկերութիւնը, վերջապէս գերմանական Արևելեան-Աֆրիկան, ուր իշխանութիւնը բանեցնում էր մի ընկերութիւն (գերմանական-արևելա-աֆրիկական ընկերութիւն) իւր պաշտօնեաներով։ Այդ ընկերութիւնն էր, որը ինքնագլուխ սկսեց իւր գործունէութիւնը, անկախ գերմանական կառավարութիւնից. բայց երբ 188։ թ. ապստամբութիւն ծագեց այդ ընկերութեան դէմ, վերջինս կարօտութիւն զգաց 6—10 միլիոն մարկ (2—3$^1/_3$ միլիոն

նութիւններ կոլոնիական խնդիրներում կան այժմ նաև Ֆրանսիայի և Անգլիայի մէջ և հաւանական է, որ դոքա ևս կը յարթեն նման ճանապարհով։

Չորրորդ, վերջապէս, նկատենք, որ անգլո-գերմանական համաձայնութեան մէջ սկզբունքի զօրութիւն է ստանում այն, որ ում պատկանում է ծովի եզերքի գիծը, այդ գծի յետևը գտնուած երկիրն ևս (գերմաներէն խօսքով հինտերլանդ-Hinterland, և այս խօսքը նաև ուրիշ ազգեր էլ սկսում են գործածել), թէև նա չը բունած էլ լինի, նոյն պետութեան պատկանելիք է համարում։ Այսպէս, Զանզիբար կղզու դիմաց աֆրիկական ցամաքի ծովեզերքը գերմանական է ճանաչուած, և այդ պատճառով էլ նորա յետևի երկիրը (հինտերլանդ՝ը) նոյնպէս թողած է Գերմանիային։

Անգլո-գերմանական համաձայնութեան հիման վերայ Գերմանիան պարտաւորւում է չը հակառակել, որ Անգլիան հովանաւորութեան տակն առնէ Զանզիբար կղզու սուլթանութեան որպէս նաև Վիտու երկրի սուլթանութիւնը՝ և սորանից կախումն ունեցող երկար ծովեզրեայ գիծը դէպի հիւսիս։ Վիտու՝ի հետ անգլիացիք երկարամեայ յարաբերութիւններ չեն ունեցած. այժմ նա կարևոր նշանակութիւն է ստացել շնորհիւ այն մեծ երկրի՝ ծովեզրից սկսած մինչ Վիկտորիա Նիանցա մեծ լիճը, որ ձեռք է բերած Անգլիական Արևելեան-Աֆրիկական Ընկերութիւնը։ Մինչև որ Վիտու՝ի սուլթանութիւնը գեր մանացող ձեռքին էր, սոքա միշտ կարող էին արշաւանքներ անել անգլիական հողերի հիւսիսային կողմերը, որով բրիտանական ազդեցութիւնը Նեղոսի աղբիւրներից (Վիկտորիա Նիանցա լճից) մինչև ծովեզրեայ երկիրը՝ Արիսինիայի լեռների ստորոտը՝ միշտ դուրս կը մնար։ Այժմ շնորհիւ գերմանացոց հետ կայացրած համաձայնու-

---

բուբլի) փոխարինութեան՝ պատերազմը վարելու և յետոյ տեղական զօրք և ոստիկանութիւն պահելու համար։ Ընկերութիւնը դիմեց գերմանական կառավարութեան, որ սա երաշխաւոր է այդ փոխարինութեան տոմսակները։ Բայց կայսերութիւնը գերադասեց ինքը միջամտելու և ուղարկեց այնտեղ կայսերական կոմիսար Վիսման՝ին, որը և խաղաղացրեց երկիրը և նորերս վերադարձաւ Բերլին։ Այժմ գեռ ևս խնդիր է, թէ ով է իշխող տէրը Արևելեան-գերմանական Աֆրիկայի այդ Գերմանական Արևելեան-Աֆրիկական ընկերութիւնը, թէ Գերմանական կայսերութիւնը։

թեան, հեռացրած է այստեղ որ և է մրցումն ուրիշի կողմից. և, բացի իտալական գերիշխանութիւնից Աբիսինիայի և սորանից կախուած երկիրների վերայ՝ Անգլիացիք այլ ևս ոչ ոքի մրցումից վախենալու բան չունին մինչև Եգիպտոսի հարաւային սահմանները։ Ի հարկէ, անգլիացիք, լիապէս օգուտ ելնելու համար այդ բոլորից, պէտք է իրանց ձեռքը գցեն Նեղոսի ամբողջ հովիտը, որը սակայն այժմ մահդիստների իշխանութեան ներքոյ է, որոնք այժմ կատաղի թշնամիներն են անգլիացիներին. բայց գոնէ այժմ անգլիացիները գործ կ՝ունենան մի ասիական-աֆրիկական ցեղի հետ և ոչ թէ մի եւրոպական առաջնակարգ պետութեան հետ, որպիսին է Գերմանիան։

Ինչ վերաբերում է Զանզիբար կղզու. սուլթանութեան, մենք արդէն նկատեցինք, որ այդտեղ է կենդրոնացած Արևելեան-Աֆրիկայի մեծ առևտուրը, քանի որ նորա դիմացի աֆրիկական ծովեղրը, որ այժմ գերմանացիներին է պատկանում, չունի նաւահանգստի յարմար տեղեր։ Ներկայ անգլո-գերմանական համաձայնութեան ամենակարևոր կէտը հենց այն է, ինչ վերաբերում է Զանզիբարին. դորանով Անգլիացիք տէր կը լինեն Արևելեան Աֆրիկայի առևտրական շուկային և շուտով կը հեռացնեն այդ կղզուց գերմանացիներին, որոնք մինչ այժմ կարևոր իրաւունքներ էին ձեռք բերել այդտեղ։ (Ի միջի այլոց գերման. Արևել. աֆրիկական ընկերութիւնը ձեռք էր բերել Զանզիբարի նախկին սուլթանից երկրի մաքսային եկամուտները)։

Նկատենք սակայն, որ 1862 թուականին Ֆրանսիայի և Անգլիայի մէջ կայացած մի համաձայնութեան զօրութեամբ՝ այդ երկու տէրութիւնները պարտաւորուել են իրար՝ իրանց իշխանութեան ներքոյ չ՝առնել Զանզիբարը, այդ պատճառով այժմ Ֆրանսիան ժխտում է Անգլիայի իրաւունքը առանց Ֆրանսիայի համաձայնութեան Զանզիբարի վերայ գերիշխանութեան իրաւունքներ հաստատել։ Իւր համաձայնութիւնը ստանալու համար Ֆրանսիան այժմ մի քանի պահանջներ է անում Անգլիայից, որոնց մասին մենք կը խօսենք մի այլ առթով, երբ այդ պահանջների մասին այժմեան բանակցութիւնները վերջացրած կը լինեն։ (Երևում է, որ դորա փոխարէն Ֆրանսիան պահանջում է, որ Անգլիան հրաժարուի այն առանձնաշնորհումներից, որ սա ունի այժմ Ֆրանսիական դաւած

Տունիսիայում, որով նաև Իտալիան սարսափած կը լինի իւր առանձնաշնորհումներից հրաժարուելու, և ընդունել, իբր փրանսիական, Ալժիրիայի հարաւում գտնուած երկիրը (հինտերլանդ)։

Այդ բոլոր կամաւոր կորուստների փոխարէն Գերմանիան ստանում է գերմանական արևելեան Աֆրիկայի հինտերլանդը (կամ երկիրը), որը տարածւում է Տանգանիկա լճի հիւսիսային մասի վերայով մինչև Կոնգոյի տէրութեան սահմանը, և Եւրոպայում Հելգոլանդ կղզին, որի ամբողջ տարածութիւնն է հազիւ կէս քառակուսի վերստ, առանց յարմարութիւնների նաւահանգստի համար։ Այդ կղզին ոչ մի պատերազմական նշանակութիւն չունէր Անգլիայի համար և գրականապէս ոչինչ չի. կորցնում Անգլիան, տալով նորան Գերմանիային։ Իսկ լորդ Սալսբրի՝ի ասելով, այդ կղզին, մի պատերազմի դէպքում՝ Գերմանիայի հետ, բաւական չէ որ անօգուտ կը լինէր Անգլիային, նա այնքան հեշտութեամբ կարող է գրաւել գերմանական նաւատորմիղից, որ պատճառ կը լինէր անգլիացիների անպատուելուն։ Այդ կղզին Անգլիան վերցրեց Դանիմարքից 1807 թ., երբ սա բռնեց Նապոլէոնի կողմը. նոյն այդ պատճառով Դանիմարքից խլուեց Նորուեգիան և միացրուեց Շվեդիայի հետ, քանի որ Շուեդիան Անգլիայի կողմնէր՝ Նապոլէոնի դէմ։ Այդ ժամանակ Նապոլէոնը, Անգլիային տիրելու համար իրան հնազանդուել, արգելեց Եւրոպային որ և է յարաբերութիւն ունենալ Անգլիայի հետ, այնպէս որ Անգլիայի առուտուրը պահպանւում էր կոնտրաբանդով միայն։ Եւ ահա հենց դորա համար շահ կար Անգլիայի համար Հելգոլանդը իւր ձեռքը գցել, քանի որ նա շատ մօտ է ցամաքին։

Դորանից դուրս այդ կղզուց երբէք մի շահ չի ունեցել Անգլիան, որի առուտուրը այդ կղզու հետ տարեկան 500 ռուբլուց աւելի չէ։

Ասացինք, որ Գերմանիայի ձեռքին մնում է Զանզիբարի դիմացի աֆրիկական ծովեղրը նորան կպած երկրով, որը երկար տարածւում է Տանգանիկա լճի հիւսիսային մասի վերայով մինչ Կոնգոյի պետութեան սահմանը։ Այդ լճի հարաւային երկիրը մնում է Անգլիացոց ձեռքում։ Սալսբրին կարծում է, որ հազիւ թէ դորանով յաջողի գերմանացիներին առևտրական ճանապարհ ստեղծել ծովեղրից մինչ Կոնգոյի պետութիւնը, որովհետև առևտուրը սիրում է մի

որ և իցէ գետի ընթացքով զարգանալ, իսկ կերմանացոց հողերի ուղղութիւնով՝ արևելքից արևմուտք այդպիսի գետ չը կայ։

Ահա այս է, ինչ կոչւում է անգլո-գերմանական համաձայնութիւնը, որը այս վերջին երկու ամիսները այսքան զրաղեցնում է եւրոպական, մանաւանդ անգլիական և գերմանական մամուլին։ Նկատենք, որ գերմանական Կայսր Վիլհելմ II այս համաձայնութիւնը կայացրել է շատ շուտափոյթ կերպով և շատ գաղտնի կերպով, այնպէս որ դործին անաւելակ են մնացել, նոյն իսկ Խնդրին ամենամօտիկ մարդիկ, և առանց խորհրդի սոցա կողմից։ Գերմանական մամուլի մեծամասնութիւնը ընդունեց այդ լուրը վշտացած, որ Անգլիայի բարեկամութեան համար գերմանական կայսրը այնքան բան զոհեց Աֆրիկայում, քանի որ Հելգոլանդը ոչ մի կերպ չի կարող վարձատրութիւն համարել այնքան կորուստների փոխարէն։

Անգլիացիք և նոյն իսկ ներկայ մինիստրութեան հակառակորդները ստիպուած են խոստովանելու, որ լորդ օրֆ Սալսբերին իր այս «աւելտուրի» մէջ Գերմանիայի հետ լաւ գործ է տարել։ Նոքա գոհ են։ Նկատենք, որ Վիլհելմ II-ը սորանով առաջին մեծ դիպլոմատական գործն է որ կատարեց Բիսմարկի հրաժարականից յետոյ...

Շ.